



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամլո հաղորդագրություն

Մայիսի 7, 2022

Հայտնի են երկրորդ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանի ճարտարապետական մրցույթի արդյունքում ընտրված նախագծերը

ԵՐԵՎԱՆ — Անցյալ տարի «**Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ)** հայտարարեց իր 2-րդ ՍՄԱՐԹ ավանի կառուցման մասին: Նոր ավանը կտեղակայվի Արմավիրի մարզում՝ հասանելի դարձնելով ժամանակակից որակյալ կրթությունը գյուղաբնակ երեխաներին ու նրանց ընտանիքներին:

Ավանի կառուցման համար այս տարվա մարտին հայտարարվեց միջազգային ճարտարապետական մրցույթ՝ բացառիկ հնարավորություն տալով աշխարհի ստեղծագործ մտքերին Արմավիրում կառուցվելիք ավանի դիզայնի համար առաջարկելու իրենց նախագծերը:

Միջազգային փորձագետներից բաղկացած ժյուրին, որը գլխավորում էր ճարտարապետ Միշել Մովսեսյանը, հավաքվեց ՔՈԱՖ-ի՝ Լոռու մարզում գտնվող առաջին ՍՄԱՐԹ կենտրոնում, որն իր դռները բացել է 2018-ին: Երեք օրերի ընթացքում ժյուրին դիտարկեց ավելի քան 70 նախագիծ:

Ներկայացնելով ընտրված նախագծերը՝ ճարտարապետ Միշել Մովսեսյանը նշում է. «Բուռն 3 օր ունեցանք՝ Լոռու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանում դիտարկելով ստացված 74 նախագծերը, որոնց քանակով և որակով շատ տպավորված էինք: Ժյուրիի անդամները միաձայն հավանություն տվեցին մի քանի նախագծերի իրենց ինքնատիպության ու բազմազան մոտեցման համար: Մրցույթը հաղթողներ է պահանջում, բայց մենք առանձնացրել ենք 9 ընտրված նախագծեր, որոնցից 5-ն արժանացել են ժյուրիի բարձր գնահատականին.

- «Լազուր»՝ Electric Architects, Հայաստան (նախագծի նույնականացման համար՝ 56012777)
- «Նայելով Արարատ լեռան»՝ Estudio Arquitectura Campo Baeza, Իսպանիա (նախագծի նույնականացման համար՝ 01502515)



CHILDREN
OF ARMENIA
FUND

- «Ծաղիկների տեռաս»՝ Ուենյի ժու, Չինաստան (Նախագծի նույնականացման համար՝ 1000084)
- «Գյուղական ծաղիկներ»՝ Քոլջ Ֆու Լգույեն, Գերմանիա (Նախագծի նույնականացման համար՝ 00003136)
- «Անվերնագիր»՝ Francisco Silvestre Navarro Arquitecto, Իսպանիա (Նախագծի նույնականացման համար՝ 19191803)

Վերջիններիս հայեցակարգային մոտեցումը մշակութային առանձնահատկություններին, համայնքին ու բնությանը համահունչ էին նախանշված չափանիշներին»:

ՄՄԱՐԹ կենտրոնները նորարարական ոչ ֆորմալ կրթական հաստատություններ են՝ միտված գյուղաբնակ երիտասարդների համար հասանելի դարձնել ռեսուրսներ, որոնք նրանց կօգնեն բացահայտել իրենց ներուժն ու զարգացնել իրենց համայնքները: Կենտրոններում 3-18 տարեկան երեխաներին ու երիտասարդներին առաջարկվում են բազմաթիվ ծրագրեր, որոնք նպաստում են նրանց ֆիզիկական, իմացական ու զգայական զարգացմանը:

Լոռու ՄՄԱՐԹ կենտրոնը մինչ օրս հյուրընկալել է 28 համայնքների 5000-ից ավելի շահառուների, որոնք գիտելիքներ ու հմտություններ են ձեռք բերել օտար լեզուների, ձեռներեցության, երաժշտության, արվեստի, ճարտարագիտության և աթլետիկայի բնագավառներում:

ՔՈԱՖ-ի 2-րդ ՄՄԱՐԹ ավանը սկիզբ կդնի ՄՄԱՐԹ ավանների տարածմանը Հայաստանի բոլոր մարզերում: ՄՄԱՐԹ ավանների ու նրանց առաջացրած Էկոհամակարգի տարածումը նոր շունչ կհաղորդի հարյուրավոր գյուղական համայնքների և զարգացում կապահովի հազարավոր շահառուների համար:

Ինչպես հայտարարվել էր նախապես, անկախ մրցույթի արդյունքներից, ժյուրիի նախնական գնահատման հիման վրա՝ ՔՈԱՖ-ը շուտով կընտրի ՄՄԱՐԹ կենտրոնի կառուցման համար թե՛ Արմավիրի մարզին, թե՛ Երեխաների կարիքներին համապատասխանող ամենահարմար նախագիծը:



CHILDREN
OF ARMENIA
FUND

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: